

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Իրան-Հայաստան-Վրաստան.
Խաղաղ հարևանության և
զարգացման ռեսլականներ**

Միջազգային գիտժողովի
նյութերի ժողովածու



**Iran-Armenia-Georgia.
Peaceful neighborhood and
development perspectives**

Collection of materials of
International conference

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**«Իրան-Հայաստան-Վրաստան. Խաղաղ
հարևանության և զարգացման տեսլականներ»**

Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու

**“Iran-Armenia-Georgia. Peaceful neighborhood
and development perspectives”**

Collection of materials of International conference

**“Иран-Армения-Грузия: перспективы
мирного соседства и развития”**

Сборник материалов международной конференции

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 327:06

ԳՄԴ 66.4

Ի 891

*Ժողովածուն տպագրվում է
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխ. խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Պետրոսյան
Խմբագրական խորհուրդ՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ենգոյան,
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Բայրուրյան,
քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Խ. Գալստյան,
քան. գիտ. թեկնածու Ա. Սաֆարյան,
պատմ. գիտ. թեկնածու Ռ. Կարապետյան:

Ի 891 «Իրան-Հայաստան-Վրաստան. Խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ». Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (15 դեկտեմբերի, 2016 թ.), Եր., 2017, 76 էջ:

“Iran-Armenia-Georgia. Peaceful neighborhood and development perspectives”.
Collection of materials of International conference (15 December, 2016),
Yerevan, 2017, 76 p.

“Иран-Армения-Грузия: перспективы мирного соседства и развития”.
Сборник материалов международной конференции (15 декабря, 2016),
Ереван, 2017, 76 с.

ՀՏԴ 327:06

ԳՄԴ 66.4

ISBN 978-5-8084-2189-9

© ԵՊՀ հրատ., 2017



**«Եկեղեցիների
համաշխարհային խորհրդի
կլոր սեղան» հիմնադրամ**

**WCC Armenia Round Table
Foundation**



**ԵՊՀ միջազգային
հարաբերությունների
ֆակուլտետ**

**Faculty of International
Relations YSU**



**«Հակամարտությունների և
խաղաղության
հետազոտման հայկական
ասոցիացիա» ՀԿ**

**Armenian Conflict And
Peace Research Association
NGO**

**«Իրան-Հայաստան-Վրաստան. Խաղաղ հարևանության և
զարգացման տեսլականներ»
միջազգային գիտաժողով,
ք. Երևան, 15.12.2016 թ.
(Երևանի պետական համալսարան)**



**“Iran-Armenia-Georgia. Peaceful neighborhood and
development perspectives”
International conference,
Yerevan, 15.12.2016,
(Yerevan State University)**

Բովանդակություն

Ողջույնի խոսքեր	5
Ելույթներ	11
Ձեկույցներ	14
Հավելված	70
<i>Գիրաժողովի օրակարգ</i>	<i>71</i>

Գիտաժողովի ողջույնի խոսքեր



***ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. դոկ-
տոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի
ողջույնի խոսքը/ The Welcoming speech of
Prof. Gegham Petrosyan, Dean of the
Faculty of International Relations of YSU***

Գիտաժողովի մեծարգո՝ մասնակիցներ, հարգարժան ներկաներ,

Ցանկանում եմ ողջունել ձեզ և ձեր աշխատանքներին մաղթել արդյու-
նավետ ընթացք ու մեծ հաջողություն: Համոզված եմ, որ կարդացվելիք զե-
կուցումները ոչ միայն գիտական և քաղաքական բարձր մակարդակով
կներկայացնեն Իրան-Հայաստան-Վրաստան խաղաղ հարևանության և
համագործակցության ներկան, այլև զարգացման ապագա տեսլականը:

Նախաձեռնելով սույն գիտաժողովը՝ Երևանի պետական համալսա-
րանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը հետապնդում էր
հետևյալ կարևոր նպատակները. առաջինը՝ ի մի բերել այն նվաճումներն ու
ձեռքբերումները, որոնք կյանքի են կոչվել տարածաշրջանի երեք տերու-
թյունների և նրանց ժողովուրդների հարաբերությունների մեջ վերջին քա-
ռորդ դարի ընթացքում, և երկրորդը՝ նախագծել այդ երեք պետությունների
հետագա զարգացման տեսլականը:

Այս գիտաժողովը մենք համարում ենք չափազանց կարևոր իրադար-
ձություն մեր տարածաշրջանի երեք հինավուրց և բարձր մշակույթ ստեղ-
ծած ժողովուրդների դարավոր հարաբերությունների պատմության տարե-

գրության մեջ, ժողովուրդներ, որոնք այսօր թոթափելով անցյալի բեռը, վստահ հայացքով են նայում դեպի ապագան:

Այս գիտաժողովը, անկասկած, բացի քաղաքական նշանակությունից, ունի նաև քաղաքակրթական խորը իմաստ, քանի որ այդ համագործակցության մասնակից երեք ժողովուրդները թեև դավանում են տարբեր կրոններ և կրոնական ուղղություններ, խոսում են տարբեր լեզուներով, նրանցից յուրաքանչյուրը ստեղծել է իր ուրույն մշակույթը, կերտել իր սեփական պատմությունը, սակայն այդ բոլորով հանդերձ նրանք երեքն էլ նույն տարածաշրջանի ժողովուրդներ են և իրենց պատմական զարգացման քառուղիներում փոխադարձաբար ազդեցություններ են ունեցել միմյանց վրա և ապրել են միևնույն մշակութային-պատմական միջավայրում: Նրանց կապում են ոչ միայն դարավոր մշակութային ավանդույթները, այլև Արևելքի ժողովուրդներին հատուկ բնավորության ու խառնվածքի գծերը:

Այսօր Հարավային Կովկասի տարածաշրջանի և Միջին Արևելքի ժողովուրդները (որի կազմի մեջ մտնում է նաև Իրանը) կանգնած են բազում մարտահրավերների առջև: Մեր խորին համոզմամբ՝ տարածաշրջանում և առհասարակ ամբողջ աշխարհում քաղաքակրթությունների երկխոսության, միջպետական հարաբերությունների ամրապնդման, և փոխադարձ վստահության ճանապարհով կարելի է ապահովել խաղաղություն, կայունություն և բարգավաճում:

Այսօր Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներն են բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը և համագործակցությունը այն երկրների հետ, որոնք հանդես են գալիս մեկը մյուսի նկատմամբ փոխադարձ հարգանքի դիրքերից:

Այդ նույն սկզբունքներով են առաջնորդվում նաև Հայաստանը և Վրաստանը: Այդ երկու նորանկախ պետությունների հարաբերությունները Իրանի հետ արդեն քառորդ դար է, ինչ զարգանում են կայուն և հավասարակշռված հիմքի վրա: Այդ երեք պետությունների ժողովուրդների միջև քաղաքական հարաբերությունների բնագավառում տիրապետող մթնոլորտը բարեկամությունն է, անկեղծությունը և կառուցողական ոգին: Այդ երեք պետությունները գործնականում ապացուցել են, որ լի են քաղաքական կամքով և վճռականությամբ միմյանց միջև բարեկամական փոխշահավետ կա-

պերը զարգացնելու ուղղությամբ: Այսօրվա իրողությունների համատեքստում հիշյալ երեք պետությունների երկարաժամկետ շահերը համընկնում են, ինչն էլ կայուն հող է ստեղծում իրական ռազմավարական գործակցության զարգացման համար:

Թույլ տվեք կրկին անգամ ողջունել այս կարևոր գիտաժողովի հարգարժան մասնակիցներին, նրանց մաղթել հաջողություն այն մեծ գործի իրականացման ճանապարհին, որի հիմքերը դրվում են այսօր, այս գիտաժողովը գումարելու պատմական պահին:

**«ԱԳՆ մամուլի խոսնակ Տ. Քալայանի
ողջույնի խոսքը/ The Welcoming speech of
Tigran Balayan, MFA RA, Press-Secretary**



Շատ ուրախ եմ այսօր ներկա գտնվել Երևանի պետական համալսարանում Հայաստանի, Վրաստանի և Իրանի միջև բարիդրացիական փոխշահավետ համագործակցությանը նվիրված գիտաժողովին և տեսնել այստեղ անվանի գիտնականների ու փորձագետների: Շնորհակալ եմ կազմակերպիչներին այս միջոցառումը նախաձեռնելու և անցկացնելու համար: Դժվար է թերագնահատել մեր երկու հարևան երկրների հետ Հայաստանի համակողմանի հարաբերությունների զարգացման կարևորությունը: Ասել, թե դրանք շատ արժեքավոր են, և մենք շահագրգիռ ենք առավել ամրապնդել ու ընդլայնել համագործակցությունը, նշանակում է ոչինչ ասել: Իրական պատկերացում կազմելու համար բավարար է միայն նշել, որ մեր արտաքին կապուղիների 100 տոկոսն անցնում է այդ երկրների միջոցով: Անցնող տարին նշանավորվեց Վրաստանի և Իրանի հետ տարբեր բնագավառներում փոխգործակցության զգալի ընդլայնմամբ: Տեղի ունեցան բարձրաստիճան փոխայցելություններ, որոնց ընթացքում ձեռք բերվեցին կարևոր համաձայնություններ և պայմանավորվածություններ՝ միտված մեր բարիդրացիական հարաբերությունների առավել խորացմանը: Վրաստանի հետ շարունակեցինք թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ ձևաչափերով համագործակցությունը: Վերացվեց մուտքի արտոնագրային ռեժիմը Իրանի հետ, ինչը նոր խթան հաղորդեց զբոսաշրջությանը, նաև Հայաստանի տարածքով իրանցի զբո-

սաշրջիկների Վրաստան այցելությունների աճին: Մոտ ժամանակներս տեղի կունենա Իրանի նախագահի այցելությունը Հայաստան, ինչը, անխոս, իր կարևոր դրական ազդեցությունը կունենա հարաբերությունների զարգացման համատեղ ջանքերի վրա: Օրինակելի քաղաքական հարաբերություններից զատ՝ կարևոր է նաև մեր փոխգործակցության տնտեսական բաղադրիչը: Այդ առումով այս տարի ևս առաջին անգամ տեղի ունեցավ՝ մեկ նշանակալի իրադարձություն Եվրոպայից Իրան Հայաստանի տարածքով մուլտիմոդալ բեռնափոխադրումը: Նոյեմբերին 2 կոնտեյներ Եվրոպայից տեղափոխվեց Փոթի, այնուհետև երկաթուղիով Հայաստան՝ «Երասխ» կայարան, ապա ավտոտրանսպորտով՝ Իրան: Կոնտեյներները Վրաստանի և Հայաստանի տարածքը հատեցին 38 ժամում: Այս փոխադրման ուղին կանոնավոր դառնալու դեպքում կմեծանա Հայաստանով միջազգային բեռնափոխադրումների ծավալը, ինչը բխում է մեր երեք երկրների շահերից: Թեհրանում առաջին անգամ տեղի ունեցավ «Արմենիա Էքսպո 2016» ցուցահանդեսը, որին մասնակցեց շուրջ 100 հայկական ընկերություն: Մեր երկրները նաև կարևոր տեղ են հատկացնում մշակութային և կրթական բնագավառներում փոխադարձ շփումներին, որոնց միջոցով է հնարավոր հասնել մեր ժողովուրդների փոխադարձ ճանաչելիության բարձրացմանը և ավանդական բարեկամության խորացմանը: Համոզված եմ, որ այս բոլոր հարցերին դուք հանգամանորեն կանդրադառնաք ձեր քննարկումներում: Բարի երթ այս կարևոր գիտաժողովի աշխատանքներին:

***Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
«Կյոր սեղան» հիմնադրամի գործադիր տնօ-
րեն Կարեն Նազարյանի ողջույնի խոսքը /
The Welcoming speech of Karen Nazaryan,
Executive Director WCC Armenia Inter-Church
Charitable Round Table Foundation***



Ողջունում եմ գիտաժողովի մասնակիցներին: Իրան-Վրաստան-Հաստան ձևաչափը շատ հետաքրքիր է ոչ միայն տնտեսական, այլ նաև կրթական, մշակութային տեսանկյունից: Այս ձևաչափը մեծ ներուժ ունի, սակայն շատ փոքր մասն է օգտագործվում: Այդ իսկ պատճառով այս միջոցառումը շատ կարևոր է բոլորիս համար:

Դահլիճում կան շատ երիտասարդներ, որոնք կարող են դառնալ այդ ծրագրի առաջնորդներն ու իրականացնողները: Չնայած սա մեր առաջին միջոցառումն է, այն ինձ հույս է ներշնչում, որ կդառնա մեծ ճանապարհի սկիզբ, և այս նախաձեռնությանը կմիանան նաև կրթական, մշակութային և երիտասարդական այլ կազմակերպություններ:

Այս գիտաժողովի արդյունքները կարող են հետագայում խթան հանդիսանալ տարածաշրջանային երկխոսության և եռակողմ ձևաչափի զարգացնելու համար: Այս առումով շատ ողջունելի է հարևան երկրների գործընկերների մասնակցությունը գիտաժողովին, և մենք լիափութ ենք, որ այս հանդիպումը հարթակ կհանդիսանա հետագայում համագործակցության և մոր գաղափարների իրագործման համար:

**Խաղաղություն և համագործակցություն. տարածաշրջանային
զարգացման նոր փիլիսոփայությունը**
Peace and cooperation. new philosophy of regional development

*Խաչիկ Գալստյան,
«Հակամարտությունների և խաղաղության
հետազոտման
հայկական ասոցիացիայի»
նախագահ, ք. գ. ք., ԵՊՀ դոցենտ
Khachik Galstyan,
“Armenian Conflict and Peace Research
Association” NGO, Chairmen, Associated
Professor, YSU*



Մեր տարածաշրջանը դարեր շարունակ գտնվել է աշխարհաքաղաքական տարբեր ուժերի շահերի բախման կիզակետում, որն ուղեկցվել է արյունալի բախումներով ու երկարատև հակամարտություններով: Այդ իսկ պատճառով էլ, խոսելով տարածաշրջանային հիմնախնդիրներից, պետք է փաստել, որ տարածաշրջանին ավելի շատ բնորոշ են կոնֆլիկտն ու մրցակցությունը, քան խաղաղությունն ու համագործակցությունը: Մեր դեպքում, դիտարկելով Իրան-Հայաստան-Վրաստան առանցքի երկրները, կարող ենք տեսնել, որ նրանցից առնվազն երկուսը՝ Հայաստանն ու Վրաստանը, ներքաշված են տարածաշրջանային հակամարտությունների մեջ, Իրանը շուրջ երեք տասնամյակ գտնվում էր գլոբալ հակամարտության մեջ ԱՄՆ-ի հետ: Իր հերթին, եթե ոչ բացահայտ կոնֆլիկտի տեսքով, ապա բավականին սուր մրցակցություն է նկատվում մի կողմից տարածաշրջանային խոշոր դերա-

կատարների՝ Իրանի և Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի և Արևմուտքի միջև տարածաշրջանային քաղաքական, տնտեսական և այլ գործընթացների վրա ուղղակի վերահսկողություն սահմանելու առումով:

Շահերի մման բարդ հարաբերակցության ու մրցակցության պայմաններում ի՞նչ այլընտրանքներ կարող են լինել: Այլընտրանքը մեկն է՝ կոնֆլիկտին և մրցակցությանը պետք է փոխարինեն խաղաղության և համագործակցության արժեքները: Այսօր դրա համար ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ: Առաջին կարևոր հանգամանքն այն է, որ այս առանցքի երկրները՝ Իրանը, Հայաստանը և Վրաստանը, իրար հետ չունեն ոչ մի տեսակ հակամարտություն, որը կարող էր խոչընդոտ հանդիսանալ համագործակցության հետագա խորացման համար: Պատմականորեն դարեր շարունակ ապրելով կողք կողքի, հանդիսանալով տարածաշրջանի բնիկ և հինավուրց ժողովուրդները՝ հայերը, պարսիկներն ու վրացիները լավ են գիտակցում խաղաղության և համագործակցության ներուժը, որը կարող է ապահովել տարածաշրջանի երկարատև կայունությունը, խաղաղությունն ու բարեկեցությունը: Երկրորդ՝ Արևմուտքի՝ Իրանի շուրջ տասնամյակներ տևած մեկուսացման ու սանկցիաների կիրառման անպտուղ քաղաքականությունը փոխվել է: Իրանը բացվում է աշխարհի առջև, աշխարհն է բացվում Իրանի առջև: Իսկ դեպի եվրոպական շուկաներ ընկած ամենակարճ ճանապարհը անցնում է Հայաստանի և Վրաստանի տարածքով: Հայաստանն ու Վրաստանը հենց այսօր պետք է պատրաստ լինեն ընդունել ապրանքների մեծ հոսքեր, որոնք կարող է ապահովել Իրանը: Հայաստանի համար սա մեծ հնարավորություն է տրանզիտային դերակատարում ստանձնելու ու ճեղքելու թուրք-ադրբեջանական շրջափակման օղակը, իսկ Վրաստանին՝ դառնալու տարածաշրջանային բեռնափոխադրումների լիարժեք խաչմերուկ:

Բացի գուտ տնտեսական շահերից՝ Իրան-Հայաստան-Վրաստան համագործակցությունն ունի նաև գաղափարական ու արժեքային հսկայական նշանակություն: Այն կարող է քաղաքակրթությունների միջև երկխոսության յուրօրինակ հարթակ ծառայել, բրիստոնյա և իսլամադավան ժողովուրդների խաղաղ համագոյակցության լավագույն առիավատչյան լինել: Որպես տարածաշրջանի հինավուրց ժողովուրդներ՝ հենց մեր ուսերին է ընկնում նաև տարածաշրջանի խաղաղության և կայունության ապահովման պատասխանատվությունը: Իսկ մման եռակողմ համագործակցության ներուժի

բազմապատկման շնորհիվ իրապես խաղաղությունն ու համագործակցությունը կդառնան գերակայող արժեքներ:

Այդ գործում մեծ է նաև երեք երկրների փորձագիտական հանրության, երիտասարդ սերնդի ներկայացուցիչների դերը: Փորձագետները պետք է մշակեն համագործակցության նոր ձևաչափերը, իսկ մեծ քաղաքականության մակարդակում կայացվող որոշումները անպայման պետք է մասնագիտական փորձաքննություն անցնեն, որպեսզի լինեն առավել կիրառելի ու արդյունավետ: Այս առումով «Իրան-Հայաստան-Վրաստան. Խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ» միջազգային գիտաժողովը կարող է իր մեծ ներդրումը ունենալ եռակողմ համագործակցության խորացման գործում, մանավանդ որ այն կազմակերպվել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի հայաստանյան պաշտոնական այցի նախօրեին: Բացի դրանից՝ այս հարթակը կարող է ծառայել նաև մասնագիտական կապերի խորացման, երիտասարդական ուսանողական փոխանակման ծրագրերի իրականացման, երեք երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև համագործակցության ցանցի ստեղծման համար: Հազարամյակներ շարունակ լինելով հարևաններ՝ մենք XXI դարում կարիք ունենք միմյանց ավելի լավ ճանաչելու, ավելի որակյալ համագործակցության, շատ ոլորտներում հարաբերությունները նոր էջից կառուցելու, խաղաղության և համագործակցության արժեքները տարածելու և արմատավորելու մեր ժողովուրդների հասարակական գիտակցության ու քաղաքական ընտրանիների գործելակերպում:

**Կրոնական առաջնորդների վարքագիծը՝ որպես խաղաղ
համակեցության օրինակ**
**The attitude of the religious leaders of Islam as a guideline for
peaceful coexistence**

*Մաջիդ Մեշքի,
ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության
մշակույթի խորհրդական
Majid Meshki,
Cultural Counselor of the Embassy
of the Islamic Republic of Iran in RA*



Սովորաբար կրոնական ու քաղաքական առաջնորդների գործունեությունն ու վերաբերմունքը տարբեր հարցերի նկատմամբ օրինակ է ծառայում հասարակության և նրանց հետևորդների համար:

Մուսուլմանների սուրբ գիրք Դուրանում իսլամի մարգարեն ներկայացվել է որպես մուսուլմանների ապրելակերպի օրինակ: Եվ այս հոդվածում ներկայացվում է իսլամի մարգարեի վերաբերմունքն այլ կրոնների ներկայացուցիչների նկատմամբ:

Իսլամի մարգարեի վերաբերմունքն այլ կրոնների հետևորդների նկատմամբ պետք է օրինակ ծառայի բոլոր մուսուլմանների համար: Ուստի իսլամի մարգարեի ապրելակերպի ուսումնասիրությունը կարևոր է հատկապես աշխարհի ներկա պայմաններում, երբ որոշ խմբավորումներ իսլամի

մարգարեի անունից բռնություն են գործադրում մուսուլմանների և այլ կրոնների հետևորդների նկատմամբ: Եթե մարդիկ ծանոթ լինեն իսլամի մարգարեի ապրելակերպին, կհասկանան, որ այն, ինչ այսօր արվում է իսլամի անունից, լիովին հակասում է այս կրոնին: Այս հոդվածում մենք կանդրադառնանք իսլամի մարգարեի վերաբերմունքին այլ կրոնների հետևորդների նկատմամբ՝ ներկայացնելով մի քանի օրինակներ:

1. Երկխոսության հրավերի սկզբունքը

Ղուրանը տարբեր այաններում խոսել է այս մասին: Օրինակ՝ Ալ Էմրան սուրայի 64-րդ այայում բարձրյալն Աստված մարգարեին պատվիրում է. «Սուրբ գրքի հետևորդներին ասա. եկեք համախմբվենք այն խոսքի շուրջ, որն ընդհանուր է մեր և Ձեր միջև: Պաշտեցեք միակ Աստծուն և ոչ մեկին նրան հավասար չդասեք»:

Հենց այս սկզբունքի հիման վրա իսլամի մարգարեի կյանքի ընթացքում տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել բազմաթիվ երկխոսություններ: Պատմությունը վկայում է, որ այս երկխոսությունների շնորհիվ երբեմն այլ կրոնի հետևորդները իսլամ են ընդունել: Սակայն նրանց մեծամասնությունը պահպանել է իր կրոնը և հարգել իսլամական հասարակության կողմից:

Պատմական փաստերի համաձայն՝ իսլամի մարգարեի հետ հանդիպելու և երկխոսելու համար Մեդինա են ժամանել այլ կրոնների ներկայացուցիչներից կազմված մոտ 40 պատվիրակություններ: Պատվիրակությունները Մեդինա են ժամանել, քանի որ այս քաղաքը համարվում էր իսլամի մարգարեի իշխանության կենտրոնը: Պատմական փաստերը վկայում են, որ մարգարեն Մեդինայում կացարան էր տրամադրում հյուրերին, և նրանցից ոմանք այնտեղ մնում էին: Մյուսները մնում էին մուսուլմանների տներում: Պատմական մի այլ վկայության համաձայն՝ մի անգամ Նաջրան շրջանի մի խումբ քրիստոնյաներ գալիս են Մեդինա: Երբ գալիս է աղոթելու ժամը, նրանք իսլամի մարգարեին խնդրում են իրենց թույլ տալ աղոթել մզկիթում: Մարգարեն համաձայնում է, և քրիստոնյաներն իրականացնում են իրենց աղոթքը:

2. Պայմանագրի կնքում

Պատմական փաստերը վկայում են, որ իսլամի մարգարեն այլ կրոնների հետևորդների հետ կնքել է մի շարք պայմանագրեր: Առաջիններից մե-

կը վերաբերում է հրեաներն: Պայմանագրում գրված է եղել, որ Մեղինայում ապրող հրեաների կյանքը, հարստությունը և կրոնը պաշտպանվում և հարգվում են: Իսկ հրեաները պարտավորվում են համագործակցել մուսուլմանների հետ, եթե վերջինների թշնամիները հարձակվեն քաղաքի վրա: Եվ քանի դեռ հրեաները հարգեն պայմանագիրը, այն կհարգի նաև մարգարեն: Իսլամի մարգարեն իր հետևորդներից Օմար Էբն Հազմին, ում ուղարկել էր Եմեն, հրամայեց քրիստոնյաներին և հրեաներին ասել, որ մուսուլման դառնալու դեպքում նրանք համարվելու են հավատացյալ և օգտվելու են նույն արտոնություններից, որ ունեն մուսուլմանները: Բացի դրանից պետությունը պաշտպանվելու է նրանց ունեցվածքը: Իսկ նա, ով շարունակի հետևել իր կրոնին, նրան որևէ մեկը չի կարող պարտադրել կրոնափոխ լինել:

Մեկ այլ տեղում իսլամի մարգարեն պայմանագիր է կնքում Նաջրան շրջանի քրիստոնյաների հետ: Այն կոչվել է Խաղաղության պայմանագիր: Այս պայմանագրի համաձայն՝ Նաջրանի և մերձակա տարածքների քրիստոնյաները, վճարելով իրենց տուրքերը, կարող են ազատորեն իրականացնել իրենց կրոնական արարողությունները: Պայմանագրում նշվել է նաև, որ այդ քրիստոնյաները գտնվում են Աստծո և իսլամի մարգարեի պաշտպանության տակ. նրանց ունեցվածքը, ընտանիքը, գործը, ամեն ինչ պաշտպանված է, ու ոչ մի կաթողիկոս կամ քահանա պաշտոնանկ չի լինելու, և նրանց ոչ ոք չի վիրավորելու:

Այլ աղբյուրի համաձայն՝ իսլամի մարգարեն պայմանագիր է կնքել նաև Սինա շրջանի քրիստոնյաների հետ, որտեղ ասվում է. «Այս պայմանագիրը կնքվում է Մոհամմադ Էբն Աբդուլլահի հետ: Այն գրվել է նրանց համար, ովքեր հետևում են իր ուսմունքներին, նրանք, ովքեր մուսուլման են կամ քրիստոնյա, արաբ են կամ այլ ազգից, նրանք, ովքեր ծանոթ են կամ անծանոթ: Նա, ով հակառակվի այս պայմանին, ուրեմն բռնություն է կատարում ոչ միայն իր և այլ մուսուլմանների, այլ նաև այլ կրոնի ներկայացուցիչների դեմ: Նման մարդիկ ոտնահարում են Աստծո ուխտը և առաքինի չեն, չեն հարգում իրենց կրոնը, ուստի արժանանալու են Աստծո անեծքին, լինեն սուլթան, թե հասարակ մարդիկ»:

Պայմանագրում նաև ասվում է, որ եթե որևէ քահանա կամ ճամփորդ հավաքվի սարերում կամ անապատներում, շեն վայրերում, Սինագոգում կամ եկեղեցում, մարգարեն իր բարեկամներով և իր հետևորդներով պաշտ-

պանելու է նրա կյանքը, հարստությունն ու ունեցվածքը, որովհետև իր դաշնակիցներն են: Պայմանագրում նաև ասվում է. «վճարելիք տուրքը նրանք պետք է վճարեն գոհունակությամբ և ոչ թե պարտադրված: Նրանց դատավորները, առաջնորդները և քահանաներն ու ճամփորդները ապահովության մեջ են լինելու, և ոչ մի Սինագոգ կամ եկեղեցի չի ավերվելու: Բացի դրանից, նրանց ունեցվածքը չպետք է մտնի մուսուլմանների տուն: Նրանց դատավորները, կրոնական առաջնորդները ազատվում են հարկերից: Իսկ նրանք, ովքեր կրոնին են ծառայում, լինեն հարուստներ, թե տերեր, չպետք է մեծ հարկեր վճարեն: Նրանցից ոչ մեկը պարտավոր չէ պատերազմելու համար զենք կրել: Մուսուլմանները պետք է նրանց պաշտպանեն և նրանց հետ վերաբերվեն լավագույն կերպով: Այդ մարդիկ պետք է ապրեն ապահով վայրում: Որտեղ էլ նրանք լինեն, պետք է հեռու մնան այն ամենից, ինչը կանհանգստացնի իրենց կամ դժվարություն կատեղծի նրանց համար»:

3. Մարդասիրական վերաբերմունք այլ կրոնների հետևորդների նկատմամբ

Մարդասիրական վերաբերմունքն այլ կրոնների նկատմամբ իսլամի մարգարեի կողմից շատ էր կարևորվում: Իսլամի պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են, որ մարգարեն, Մեդինայի մերձակայքում բնակվող հրեաների կողմից իրականացվող սխալ քայլերով հանդերձ, ամձամբ մասնակցում էր նրանց ծեսերին, այցելում հիվանդներին և նրանց ընտանիքներին, առևտուր անում նրանց հետ և մասնակցում էր հուղարկավորություններին: Այդ հարգանքը տարածվում էր նաև կրթական ոլորտի վրա: Մեդինայի հրեաներն ազատ էին իրենց երեխաներին կրթելու ըստ իրենց ուսմունքների: Նրանք ունեին տներ, որտեղ ուսուցանվում էին հրեական ուսմունքները: Այս տները մուսուլմանները անվանում էին Բեյթօլմադարես: Իսլամի մարգարեն իր իշխանության ժամանակ հրեաներին թույլ տվեց տնօրինել այդ դպրոցները և երեխաներին դաստիարակել ըստ իրենց ուսմունքների: Պատմական փաստերը վկայում են, որ մարգարեն շատ խիստ էր վերաբերվում այն մուսուլմաններին, որոնք նեղացնում էին այլ կրոնների հետևորդներին և մշտապես հորդորում էր հարգել այլ կրոնների իրավունքները և հարստությունը: Որպես օրինակ, երբ խախտվեց հրեաների և մուսուլմանների Մեդինայում կնքած պայմանը, մի մուսուլման հովիվ, որի մոտ էին հրեաների ոչխարները, միացավ մուսուլմանների ճամբարին և իր հետ

բերեց նաև այս ոչխարները: Սակայն քանի որ դա համարվում էր կենդանի տերերի նկատմամբ դավաճանություն, իսլամի մարգարեն հովվին ստիպեց ոչխարները վերադարձնել տերերին: Նա ասաց, որ մարդիկ իրենց ոչխարները վստահել են իրեն և նրա արածը իսլամի տեսանկյունից դավաճանություն է: Իսլամի տեսանկյունից, դավաճանություն է համարվում այն, որ մարդ յուրացնում է իրեն վստահված ուրիշի ունեցվածքը, եթե անգամ դա թշնամուն է պատկանում:

Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցությունը և նրա հեռանկարները

Iran-Armenia-Georgia: trilateral cooperation and its prospects

Վահան Բայբուրդյան
*պ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարա-
բերությունների և դիվ. ամբիոնի պրոֆեսոր,*
Prof. Vahan Bayburdyan,
Department of International Relations, YSU



Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանային իրո-
դությունների համատեքստում ծնունդ էր առնում մի այնպիսի իրավիճակ,
երբ Հարավային Կովկասի երկու նորանկախ պետությունների՝ Հայաստա-
նի Հանրապետության և Վրաստանի համար լայն հնարավորություններ ու
հեռանկարներ էին բացվում Մերձավոր ու Միջինարևելյան տարածաշրջա-
նի առաջատար պետություններից մեկի՝ Իրանի Իսլամական Հանրապե-
տության հետ բազմապիսի հարաբերությունների ծավալում և անկաշկանդ
զարգացման համար:

Անկախության ձեռք բերումով Հայաստանը և Վրաստանը հնարավո-
րություն ստացան ընդգրկվելու տարածաշրջանային քաղաքական կյանքի
մեջ՝ որպես հարավկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքա-

կան համակարգի անդամներ: Հետևաբար փոխադարձ ճանաչումից և դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո օրակարգի հրատապ հարց էր դառնում ոչ միայն միմյանց միջև երկկողմ հարաբերությունների հաստատումը, այլև բազմակողմ ձևաչափով կապերի իրագործումը: Դեռևս 1993 թվականին Երևանի, Թեհրանի և Թբիլիսիի քաղաքական շրջաններում և առանձին անհատների մոտ քնածում էր Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցության գաղափարը, ճիշտ է, դեռևս խիստ անորոշ և մշուշապատ ձևով: Ընդ որում, հստակորեն գիտակցվում էր, որ այդ համագործակցության մեջ յուրաքանչյուր մասնակից պետություն ունի իր յուրահատուկ շահն ու տնտեսական, քաղաքական և ռազմավարական հետաքրքրությունները: Իրանի Իսլամական Հանրապետության շահը մոտավորապես մեկնաբանվում էր հետևյալ կերպ. Խորհրդային Միության փլուզման հետևանքով նորանկախ պետությունների, այսպես կոչված, «հարավային գոտու» ստեղծումը, որն ընդգրկում էր նաև Հարավային Կովկասի նորաստեղծ հանրապետությունները, լուրջ տեղաշարժեր էր մտցրել Իրանի աշխարհաքաղաքական իրողությունների մեջ: Նախ այդ երկրի և Ռուսաստանի միջև գոյանում էր բուֆերային մի գոտի, որը ձեռնառու էր Իրանին: Անկասկած, Խորհրդային Միության փլուզումով ոչ միայն վերանում էր վերջին երկու հարյուրամյակների ընթացքում Իրանի անվտանգությանը և տարածքային ամբողջականությանը սպառնացող պետությունը, այլև չքանում էր հյուսիսային հարևանների հետ Իրանի հարաբերությունների հնուց ի վեր գոյություն ունեցող ապիմետրիան: Այլ կերպ ասած՝ հյուսիսում Իրանի համար ստեղծվում էր անվտանգության մի հաստատուն գոտի: Նման պայմաններում հասկանալի է, որ լինելով միջինարևելյան աշխարհաքաղաքական միջավայրի նյութական և մարդկային ռեսուրսներով, արդյունաբերական ներուժով և ռազմական հնարավորություններով առաջատար տերություններից մեկը՝ ԻԻՀ-ը հնարավորություն էր ստանում տարածաշրջանային քաղաքականության բնագավառում վարելու վերին աստիճանի մեծ լիցք պարունակող, եռանդուն ու գործուն քաղաքականություն:

ԻԻՀ արտաքին քաղաքական ռազմավարության հարավկովկասյան ուղղության կարևորագույն խնդիրն էր համարվում նորանկախ պետությունների հետ համագործակցության ճանապարհով դուրս գալ տարածաշրջանային մեկուսացումից, դառնալ նոր ձևավորվող անվտանգության համա-

կարգի լիիրավ անդամ, ջանքեր գործադրել Հարավային Կովկասում արտաքին ուժերի հնարավոր ազդեցության ուժեղացումը թույլ չտալու համար, հարավկովկասյան տարածաշրջանը կանխատեսելի և անվտանգ դարձնելու նպատակով ստանձնել միջնորդի դեր առկա կոնֆլիկտներում, տարածել իր տնտեսական և քաղաքական ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջանում և այլն:

Առհասարակ ԻԻՀ-ը կենսականորեն շահագրգռված է, որ զերծ պահի իրեն իր սահմանների երկայնքով ընկած տարածքներում տեղի ունեցող անկայունության ցանկացած բացասական հետևանքներից:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ Իրանը չունի որևէ տարածքային պահանջ Հարավային Կովկասում: Նրա քաղաքական սկզբունքը այդ երկրամասում պայմանավորված է կայուն և բազմակողմանի համագործակցության, փոխվստահության, կայուն խաղաղության շահերով:

Ուշագրավ է նշել, որ նորանկախ Հայաստանի և Վրաստանի հետ հարաբերություններ իրականացնելիս, նկատի ունենալով նրանց քրիստոնեական արմատները, ԻԻՀ քաղաքական շրջանները ձեռնպահ էին մնում «խլամական հեղափոխությունն» արտահանելու քայլերից և առաջ էին մղում հայ ու վրացի ժողովուրդների հետ հոգեկան ու մշակութային հարազատության և պատմականորեն նրանց «միասնական ընտանիքի» պատկանելության վերաբերյալ հայեցակարգը:

Թեհրանի համար ոչ պակաս մեծ կարևորություն ուներ նաև այն, որ քրիստոնյա Հայաստանի և Վրաստանի հետ հարաբերությունների զարգացումը կարող էր օրինակելի մոտիվացնել հանդիսանալ իսլամի և քրիստոնեության խաղաղ գոյակցության ցուցադրման կամ «քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքի կոնկրետ դրսևորման համար՝ փարատելու համար Արևմուտքում լայնորեն տարածված այն տեսակետը, թե իրանական «հեղափոխական բնույթի ֆունդամենտալիզմը տոգորված է կրոնական այլամերժության և հարձակողական ռևանշիզմի ոգով»:

Հարկ է նշել, որ Հարավային Կովկասի հետ հարաբերությունները ԻԻՀ-ը ի սկզբանե կառուցում էր հիմնականում երեք ուղղություններով՝ տնտեսություն, քաղաքականություն և անվտանգություն:

Այդ համակարգում Հայաստանը և Վրաստանը ունեին իրենց հատուկ դերակատարությունը: Իրանի կողմից Հայաստանը դիտվում է որպես մի

տարածք, որի վրայով նա կարող է դուրս գալ դեպի սևծովյան մավահան-գիստները, իսկ այնուհետև Եվրոպա և Ռուսաստան: Նկատի ունենալով, որ եվրոպական երկրների հետ Իրանի ցամաքային առևտրի մեծագույն մասը իրականացվում է Թուրքիայի վրայով, Հայաստանը և Վրաստանը կարող են դառնալ այդ առևտրի համար այլընտրանքային ճանապարհ: Հայտնի իրողություն է նաև, որ Հարավային Կովկասի հետ Իրանի հարաբերություն-ներում ռազմավարական կարևոր ուղղություններից մեկը կոմունիկացիանե-րի և հաղորդակցության ճանապարհների զարգացումն է: Կասկածից վեր է, որ այդ բնագավառում ևս Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համա-գործակցությունը կարող է շլացուցիչ հեռանկարներ բացել Իրանի համար:

Ինչպես հայտնի է, ի տարբերություն Հայաստանի՝ Վրաստանը Իրանի հետ չունի անմիջական սահմաններ, որը Հայաստանի համար լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում առավել սերտ համագործակցության հա-մար: Ուստի Վրաստանը առաջին հերթին հետաքրքրում է Իրանին որպես Եվրոպա դուրս գալու ճանապարհ՝ օգտագործելով նրա սևծովյան մավա-հանգիստները: Վրաստանը նաև էներգակիրները եվրոպական շուկա ար-տահանելու Իրան-Հայաստան շղթայի մի մասն է: Անշուշտ, չի կարելի բա-ցառել նաև Իրանի հետաքրքրությունները Վրաստանի նկատմամբ՝ նաև այլ բնագավառներում: Օրինակ՝ Իրանը ձգտում է ամրապնդվել այդ երկրի առևտրական և ֆինանսական շուկաներում. աշխատում է այնտեղ գտնել սպառման շուկաներ իր ոչ նավթային արտադրանքի համար, մեծ հետա-քրքրություն է դրսևորում Վրաստանի նկատմամբ որպես զբոսաշրջության երկիր և այլն:

Ճիշտ է, Վրաստանի հետ հարաբերություններում կան նաև որոշակի բարդություններ, այդ թվում՝ նաև ռուս-վրացական ներկա հարաբերություն-ների գործոնը, մանավանդ որ ԻԻՀ-ը իր վրացական, թերևս նաև հարավկով-կասյան քաղաքականությունն իրագործելիս լրջագույն կերպով հաշվի է նա-տում Ռուսաստանի Դաշնության շահերի հետ: Պատահական չէ, որ նոր տարածաշրջանային կազմակերպության ստեղծման բոլոր քննարկվող բա-նաձևերից Իրանը նախապատվությունը տալիս է միայն այն տարբերակին, որի մեջ պարտադիր մասնակցություն կարող է ունենալ Ռուսաստանը: Սա-կայն կարծում ենք, որ հիշյալ բարդությունը հաղթահարելի է, քանի որ հա-րավկովկասյան տարածաշրջանում խոշորամասշտաբ տնտեսական նա-

խագծեր իրականացնելիս Ռուսաստանի Դաշնությունը ևս կարող է ունենալ հետաքրքրություններ և շահեր:

ԻԻՀ-ը Վրաստանի անկախությունը ճանաչելուց և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո միաժամանակ հանդես եկավ հայտարարությամբ, որ ինքը ճանաչում է նրա տարածքային ամբողջականությունը. մի հանգամանք, որը Վրաստանի քաղաքական շրջանների համար ուներ առաջնակարգ կանոնություն՝ կապված Աբխազիայի և Հարավային Օսեթիայի խնդիրների հետ: Հենց դա էլ դարձավ երկու պետությունների միջև կառուցողական երկխոսության հիմքը: Ընդ որում, Թեհրանը մաս հայտարարեց, որ պատրաստ է աջակցություն ցուցաբերել Վրաստանում ցանկացած կոնֆլիկտային խնդրի լուծման համար՝ քաջ գիտակցելով, որ դրանց առկայության դեպքում ինքը կարող է գրկվել «Իրան-Հայաստան-Վրաստան-Սև ծով-Եվրոպա» միջանցքի օգտագործման հնարավորությունից:

Իրան-Վրաստան երկկողմ հարաբերությունների նշանավոր դրվագ հանդիսացավ 1993 թվականի սկզբին Վրաստանի նախագահ Էդվարդ Շևարդնաձեի պետական այցը Իրան, որի արդյունքում ստորագրված փաստաթղթերը դարձան վրաց-իրանական համագործակցության զարգացման իրավական հիմքը: Ի դեպ, այդ այցի ժամանակ նախագահ Շևարդնաձեն հետամուտ էր «խաղաղ Կովկաս» ստեղծելու իր նախագծին և այդ կապակցությամբ խնդրում էր ԻԻՀ աջակցությունը:

Նշված այցի ժամանակ Վրաստանի նախագահի կողմից շոշափվեց մաս Իրանի տարածքով Վրաստանի՝ դեպի Կենտրոնական Ասիա և Պարսից ծոց տրանսպորտային ելքի հարցը:

Շևարդնաձեի այցին հետևեց 1995 թվականի ապրիլին ԻԻՀ նախագահ Աբբաս Հաշեմի Ռաֆսանջանիի պատասխան այցը Վրաստան, որի ընթացքում մի շարք քաղաքական և տնտեսական հարցերի քննարկման հետ միաժամանակ Իրանի նախագահը դրսևորեց հետաքրքրություն Իրան-Հայաստան-Վրաստան տրանսպորտային միջանցք ստեղծելու վերաբերյալ:

Այսպիսով՝ միանգամայն ակնհայտ է, որ սկզբունքորեն Վրաստանը պատրաստ էր եռակողմ համագործակցության ձևաչափը կյանքի կոչելու գաղափարին:

Կարծում եմ՝ ավելորդ է խոսել նման համագործակցությանը Հայաստանի անվերապահ համաձայնության մասին: Հանրահայտ իրողություն է, թե անկախության ձեռքբերումից հետո Հայաստանի համար ինչպիսի կարևորություն ունեն էր Իրանի հետ երկկողմանի համագործակցությունը, երբ Հարավային Կովկասի տարածաշրջանում ստեղծվել էր երկրաքաղաքական չափազանց բարդ իրադրություն, երբ հիմնովին խախտվել էին հարևան պետությունների միջև նախկինում եղած տնտեսական ու տրասպորտային կապերը, երբ Հայաստանի մանուկ Հանրապետությունը շրջափակման օղակի մեջ էր առնվել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, Ղարաբաղում ընթանում էր ծանր պատերազմ, իսկ մեր հյուսիսային հարևան Վրաստանում, որը Հայաստանի համար արտաքին աշխարհի դուրս գալու միակ տարանցիկ ճանապարհն էր, տիրում էր անկայուն վիճակ, բնականաբար, առաջին հերթին ծովագուրկ Հայաստանի համար իմպերատիվներից մեկն էր Իրանի հետ հարաբերությունների հաստատումը և կայուն զարգացումը: Դա նրա համար ոչ միայն կենսական անհրաժեշտություն էր, այլև բնական պահանջ, պատմաաշխարհագրական պարտադրված իրողություն: Երևանում պարզորոշ կերպով գիտակցվում էր այն իրողությունը, որ Իրանը նախ և առաջ դեպի արտաքին աշխարհը բացված պատուհան է Հայաստանի համար, քանի որ այդ երկիրն իր առանձնահատուկ դիրքով, վիթխարի տարածքով, համաշխարհային նշանակություն ունեցող կոմունիկացիաներով մի յուրահատուկ կապող օղակ է ոչ միայն իր սահմանակից պետությունների, այլև ողջ տարածաշրջանների՝ Կովկասի, Կասպյան շրջանի, Կետրոնական Ասիայի, Հնդկական թերակղզու, Սիջագետքի և արաբական աշխարհի հետ: Հիրավի, Իրանը համաշխարհային մասշտաբով մի տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը: Այդ երկիրը Պարսից ծոցում վերահսկում է համաշխարհային մասշտաբով ռազմավարական նշանակություն ունեցող Հորմուզի նեղուցը, առհասարակ Պարսից ծոցի գոտում առանցքային նշանակություն ունեցող պետություններից մեկն է, որի քաղաքականությունից է նշանակալի չափով կախված իրադրությունը ոչ միայն այդ տարածաշրջանում, այլև ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքում: Բացի դրանից՝ Իրանն ունի ոչ միայն պատկառելի բնական և մարդկային ռեսուրսներ, այլև հսկայական տնտեսական, ռազմական, տեխնոլոգիական և գիտական ներուժ: Անժխտելի է նաև իրանա-

կան գործոնի ազդեցությունը Մերձավոր ու Միջին Արևելքում միջազգային հարաբերությունների արդի համակարգի վրա: Մասնավորապես այդ երկիրները Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմաքաղաքական հարաբերակցությունը հավասարակշռող ազդու ուժ է, ինչպես նաև արևմտասիական տարածաշրջանային քաղաքականության վճռական գործոն:

Ի սկզբանե Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ ձևաչափով համագործակցության օգտին՝ ստանձնելով իր հարավային և հյուսիսային հարևանների հետ կապող օդակի դերը: Դեռևս ԻԻՀ հետ հարաբերությունների հաստատման արշալույսին՝ 1992 թվականի փետրվարի 9-ին, ՀՀ և ԻԻՀ միջև ստորագրված հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագրում նշվում էր, որ հայկական կողմը իր համաձայնությունն է տալիս՝ ապահովելու Հայաստանի տարածքով ԻԻՀ բեռնատար մեքենաների տարանցիկ անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև իր տարածքով իրանական գազամուղի տարանցիկ անցումը դեպի այլ երկրներ: Այդ նույն սկզբունքները արտացոլված էին նաև 1992 թվականի մայիսի 7-ին ՀՀ և ԻԻՀ նախագահների կողմից ստորագրված «Համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին» համաձայնագրում, որը դարձավ Հայաստանի և Իրանի միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կառուրագույն փաստաթուղթը:

1996 թվականին Արաքս գետի վրա Հայաստանի և Իրանի կողմից համատեղ կառուցված մշտական կամրջի շահագործումից հետո հնարավորություն ստեղծվեց տարանցիկ բեռների փոխադրման համար Հայաստան և նրա վրայով Վրաստան: Խոշոր մասշտաբներով սկսեց գործել Պարսից ծոց-Իրան-Հայաստան-Վրաստան տրանսպորտային սխեման: Պարսից ծոցի Բանդար-Աբբաս նավահանգիստը սկսեց ծառայել որպես փոխաբեռնման կետ՝ ծոցի ավազանի (հատկապես Արաքսյան Սիսցյալ Էմիրությունների), Հնդկաստանի և Հարավարևելյան Ասիայի երկրներից տարանցիկ բեռներ Հայաստան տեղափոխելու և այնտեղից դեպի Սև ծովի վրացական նավահանգիստները ուղղելու համար: Ծայր առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ:

Նկատի ունենալով Հայաստանի ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքը, Արևելքից և Արևմուտքից նրա շրջափակումը և այլն՝ դեռևս 1990-ական թվականներին ՀՀ բարձրագույն մարմինների նախաձեռնությամբ ծնունդ առավ այլ պետությունների հետ Իրանի մասնակցությամբ բազմակողմ հարաբերությունների գաղափարը: Օրինակ՝ 1995 թվականին հիմք դրվեց Իրան-Հայաստան-Թուրքմենստան եռակողմ համագործակցությունը, որի շնորհիվ Իրանի տարածքով Հայաստանը Թուրքմենստանից ստանում էր բնական գազ և էլեկտրականություն:

1996 թվականի դեկտեմբերին՝ ԻԻՀ նախագահի առաջին տեղակալ պրոֆեսոր Հասան Հաբիբիի՝ Հայաստան պաշտոնական այցի ժամանակ, թիվս բազմաթիվ այլ հարցերի, հատուկ քննարկումների առարկա դարձավ նաև Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան քառակողմ համագործակցություն ստեղծելու ծրագիրը, որն առաջարկվել էր Հայաստանի կողմից և արժանացել իրանական կառավարության հավանությանը: Այդ ծրագիրը իր նպատակադրումների թափով ու ծավալներով կոչված էր մասնակից պետությունների համար ապահովել հսկայական չափերի հասնող տնտեսական, քաղաքական և ռազմավարական բնույթի առավելություններ ու օգուտներ: Սակայն, դժբախտաբար, Վրաստանը, որը նախապես տվել էր իր համաձայնությունը այդ քառակողմ համագործակցությանը մասնակցելու վերաբերյալ, վերջին պահին հրաժարվեց մասնակից լինելուց: Դա արդյունք էր Վրաստանի նկատմամբ արտաքին ճնշումների: Այդ համագործակցությունը արգելափակողների առաջին շարքերում էին Թուրքիան և Ադրբեջանը, որոնք, հասկանալի է, շահագրգռված էին, որ այդ նախագիծը մնա թղթի վրա: Ուստի Հայաստանը, Հունաստանը և Իրանը որոշեցին եռակողմ ձևաչափով, առանց Վրաստանի մասնակցության, կյանքի կոչել եռակողմ մի համագործակցություն, որի վերաբերյալ այդ երեք երկրների արտաքին գործերի նախարարների միջև 1997 թվականի դեկտեմբերին ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր: Այդ համագործակցությունը, որն ուժի մեջ է մինչև օրս, հատկապես իր գործունեության առաջին շրջանում գործում էր վերին աստիճանի արդյունավետ կերպով: Նրա շրջանակներում ստեղծվել էին հատուկ աշխատանքային խմբեր, որոնք կողողինացնում էին կառույցի գործունեությունը ամենաբազմապիսի բնագավառներում, մասնավորապես կապի, տրանսպորտի, արդյունաբերության, էներգետիկայի,

բնական աղետների դեմ պայքարի, շինարարության, զբոսաշրջության, շրջակա միջավայրի պահպանման և այլն:

Հետագայում Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցության գաղափարը միառժամանակ դրվեց մահուղի տակ, թեև արձանագրվեցին առանձին դեպքեր, որոնք հույս էին ներշնչում, որ տարածաշրջանում քաղաքական իրադրության փոփոխությունից հետո բոլոր կողմերի համար այդ շահավետ գաղափարը վերստին կբարձրանա մակերես: Հուսադրող իրադարձություններից մեկն էր, օրինակ, 1999 թվականի հունիսին ստորագրված Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համաձայնագիրը՝ թմրանյութերի անօրինական փոխադրումների դեմ պայքարի վերաբերյալ: Ուշագրավ է նշել, որ վրաց քաղաքական շրջանակները այդ փաստաթուղթը գնահատեցին որպես կարևոր քայլ տարածաշրջանային եռակողմ համագործակցության ճանապարհին:

Ներկայումս, երբ Արևմուտքը Իրանի նկատմամբ վերացրել է պատժամիջոցները, մյուս կողմից հրատապ խնդիր են դարձել Արևմուտքի երկրների հետ Իրանի այլընտրանքային ճանապարհների որոնումները, այդ թվում՝ նաև էներգակիրների արտահանման խողովակաշարեր անցկացնելու առումով, մեր խորին համոզմամբ՝ վերստին օրակարգի անհետաձգելի հարց է դառնում Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցության գաղափարը կյանքի կոչելը, որը մոր հնարավորություններ կբացի այդ երեք երկրների տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ կարգի հարաբերությունների վերընթաց զարգացման համար:

Այս լավատեսության համար հիմք է հանդիսանում այդ խնդրի վերաբերյալ Հայաստանի և Իրանի կառավարող շրջանների քաղաքական կամքի առկայությունը: Մեր համոզմամբ՝ հիշյալ հարցի նկատմամբ փոխվել է նաև Վրաստանի դիրքորոշումը, որի քաղաքական վերնախավը կարծես թե հանգել է այն եզրակացության, որ երկրին անհրաժեշտ է ոչ միայն արևմտյան, այլև արևելյան ուղղվածություն: Այդ առթիվ վրաց հանրահայտ հետազոտող-վերլուծաբան Նուզգար Տեր-Օգանովը, օրինակ, գտնում է, որ Վրաստանի համար Իրանի աշխարհագրական դիրքն ապահովում է ելք դեպի Հարավային Ասիայի երկրներ, Չինաստան և Հնդկաստան:

Կարելի է ամենայն վստահությամբ արձանագրել, որ եռակողմ այդ համագործակցությունը իրականանալու դեպքում կարող է դառնալ ոչ միայն

մասնակից երեք պետությունների զարգացման ու բարգավաճման խթան, այլև տարածաշրջանում խաղաղության և կայունության լուրջ գործում: Կասկածից վեր է, որ այդ համագործակցությունը բոլոր կողմերի ազգային և պետական շահերի տեսակետից կարող է ունենալ կենսական կարևորություն:

Կարծում ենք՝ ապագա այդ համագործակցությունը հեռանկարային է և խոստումնալից:

Международная сеть «Университеты за мир» International network "Universities for Peace"



*Александр Русецкий,
Директор Кавказского
института региональной безопасности,
Rusetsky Alexander,
Director of the South Caucasus
Institute for Regional Security*

Идея разработана в Международном центре университетской дипломатии, созданном Кавказским институтом региональной безопасности на базе Кавказского международного университета, в котором успешно развивается Программа развития культуры многоканальной дипломатии, разработанной известным дипломатом и общественным деятелем из США - Джоном Мак Дональдсом.

Инициатива создания сети «Университеты за мир» впервые была представлена в 2013 году ректором КМУ Кахабером Кордзя на VI Черноморском Симпозиуме, ежегодно проводимом на базе Гиресунского университета (Турция) и была активно поддержана целым рядом университетов, участвовавших в работе Симпозиума.

Мотивация создания сети была обусловлена рядом факторов. В истории есть примеры, когда представители агрессивного национализма и радикализма университетского сообщества внесли и продолжают вносить свой «вклад» в формирование и монументализацию вражеских стереотипов,

подведение научной основы в оправдание политики шовинизма и этно-центризма.

Университеты и университетские сообщества в свою очередь могут становиться жертвами войн и насилия. В результате конфликтов в Абхазии и Цхинвальском регионе/Южной Осетии разделенными оказались и университеты, когда одна часть студентов и профессорско-преподавательского состава вынуждена покинуть место постоянного нахождения и продолжить свою работу в изгнании. Схожую ситуацию разделения можно наблюдать сегодня в Украине на примере высших учебных заведений Донецка и Луганска.

Основная цель создания сети «Университеты за Мир» заключалась в том, что университеты являются акторами международной политики и могут играть важную роль в процессе урегулирования конфликтов, инициирования различных миротворческих инициатив.

В этом направлении можно отметить несколько ролей и функций:

- Прежде всего, университеты являются важными образовательными центрами, в функции которых входит подготовка специалистов по вопросам конфликтов и миротворческих процессов, воспитании нового поколения профессионалов, будущей политической и общественной элиты.
- Университеты являются центрами исследований возникновения конфликтов, разработки новых теоретических моделей и рекомендаций, а также практических шагов направленных на превенцию возникновения новых конфликтов, разрешение существующих конфликтов.
- Университеты – это также центры межкультурного общения студентов, преподавателей, представляющих различные этнические и конфессиональные группы. Этот компонент усиливается благодаря действующим программам обмена в системе высшего образования, программам межуниверситетского сотрудничества как на билатеральном, так и мультилатеральном уровнях.

- И, наконец, самое главное – университеты как медиаторы, инициаторы новых миротворческих процессов, позволяющих создать политическую, социальную и психологическую среду для коммуникации представителей обществ, разделенных в результате конфликтов, разработке и апробации инновационных предложений по восстановлению доверия, взаимопонимания, инициации новых переговорных форматов.

В рамках сети уже был осуществлен целый ряд инициатив. В Декабре 2014 года состоялся круглый стол «Перспективы урегулирования Украинского кризиса», состоялся ряд видеоконференций и форумов.

В настоящее время в порядке ротации координацию работы сети осуществляет Запорожский национальный университет.

Важнейшим элементом нашей политики, является создание кавказской субсети. Мы надеемся, что Кавказские университеты смогут внести свой важный вклад в дело мира и урегулирования существующих конфликтов.

**Հայաստանը, Եվրասիական ինտեգրումը և
Հյուսիս-Հարավ միջանցքը**

Armenia, Eurasian integration and North-South corridor,



*Արամ Սաֆարյան
«Ինտեգրացիա և զարգացում»
հասարակական կազմակերպության
նախագահ, ք. գ. ք.
Aram Safaryan,
Chairman of the “Integration and
development” NGO, PhD*

Թույլ տվեք նախ և առաջ շնորհակալություն հայտնել այս բարձր մակարդակի գիտաժողովում ելույթի հնարավորություն ընձեռելու համար: Պետք է ասեն, որ հետաքրքրությամբ և ուշադրությամբ լսեցի պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բարբուրյանի ելույթը: Նա ծնվել է Վրաստանում, երկար տարիներ հաջողությամբ աշխատել Իրանի Իսլամական Հանրապետությունում և ակնառու ծառայություններ ունի հայ գիտական արևելագիտության ասպարեզում: Ես հաճույքով եմ հիշում Թեհրանում նրա հետ աշխատած տարիները, և ինձ համար պատիվ է նույն գիտաժողովում ելույթ ունենալը:

Երկու խոսք պարոն Մուհամմեդ Մեշքիի ելույթի մասին: Կուզենայի, որ ուսանողները հասկանային, որ այն, ինչ ասաց պարոն Մեշքին այս ամբիոնից, գաղափարախոսական և աշխարհայացքային հիմքն է այն պետական քաղաքականության, որի հանդեպ բազմամիլիոն բնակչություն ունեցող մեր հարևան և բարեկամ Իրանում հանդուրժող և բարյացակամ վերա-

բերմունք կա ոչ մահմեդական փոքրամասնությունների՝ հայերի, հրեաների և գրադաշտականների հանդեպ: Մասնավորապես, մեր հայրենակիցները, հարյուրավոր տարիներ բնակվելով Իրանում, օգտվում են փոքրամասնությունների համար նախատեսված լայն իրավունքներից և վերջին 25 տարիներին ունեն իրենց պատմական հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության հետ բազմաբնույթ համագործակցություն իրականացնելու բոլոր հնարավորությունները:

Ես համոզված եմ, որ հայերն ու վրացիները, որոնք մի քանի հազար տարի ապրում են հարևանությամբ, իրավամբ, եղբայր ժողովուրդներ են: Ինչո՞ւ եմ ես այդպես կարծում: Վերջին երկու հազար տարում երկու հարևան ժողովուրդները միմյանց դեմ պատերազմել են երկու անգամ: Այնինչ, համագործակցության, փոխգործակցության, միմյանց օգնելու պատմական օրինակները հարյուրավոր են և հազարավոր: Թվում է, թե ոչինչ չի կարող ստվերել մեր երկու հարևան ժողովուրդների ձգտումը՝ խորացնելու երկկողմ համագործակցությունը: Սակայն առկա մի զարմանալի փաստ. մենք փնտրում ենք ու չենք գտնում սինքրոն թարգմանիչներ հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն: Արդյո՞ք սա չի խոսում այն մասին, որ երկու հարևան պետությունները կարծես սովորել են առանց մեկմեկու ապրել և որոշակի իմաստով նաև իրարից հեռանալու ուղղության վրա են: Վրաստանը այսօր բռնել է արևմտյան քաղաքակրթության մաս դառնալու և եվրոպական ինտեգրման ճանապարհը: Հայաստանը Եվրասիական տնտեսական միության և ՀԱՊԿ-ի անդամ է: Մեր քաղաքական առաջնորդները, այժմ, չնայած այս տարբերություններին, մտածում են երկու երկրների համագործակցության և ինտեգրման օպտիմալ ուղիներ գտնելու մասին:

Խորհրդային ժամանակներում և դրանից առաջ հայերը Վրաստանի ամենախոշոր փոքրամասնությունն էին: Այսօր դա այդպես չէ, որովհետև ամենախոշոր փոքրամասնությունը ադրբեջանցիներն են: Մենք պարտավոր ենք միասին մտածել այն մասին, որ հայ-վրացական քաղաքական, տնտեսական, մշակութային, հումանիտար բազմբնույթ համագործակցության բազմադարյան փորձը չփոշիանա և չդառնա լույ պատմություն: Ես համոզված եմ, որ մեր պատգամը Վրաստանի Զավախքի տարածաշրջանի մեր հայրենակիցներին պետք է մեկը լինի՝ արագ սովորել վրացերեն, լիակատար մաս կազմել վրացական հանրության, առաջ գնալ, բարգավա-

ճել և հարստանալ և իրենով մի ապահով կամուրջ դառնալ, որը հուսալիորեն կկապի Վրաստանը Հայաստանին:

Գաղտնիք չէ, որ Վրաստանում այսօր շատ ուժեղ է Թուրքիայի և Ադրբեջանի ազդեցությունը: Մեր երկրի հնարավորությունները անհամեմատելիորեն փոքր են թուրք-ադրբեջանական ազդեցության ներուժի համեմատությամբ: Բայց մենք հասկանում են, որ հարևան Վրաստանը, որը մեզ համար կյանքի ճանապարհ է, չի կարելի թողնել լոկ թուրք-ադրբեջանական գրկում: Ես համոզված եմ, որ Հայաստանը օգտակար գործ արած կլինի, եթե վրաց գործընկերներին ցույց տա Ռուսաստան-Վրաստան-Իրան-Հայաստան Հյուսիս-Հարավ առանցքի տնտեսական և քաղաքակրթական ներուժը և պայմաններ ստեղծի այդ առանցքի լիարժեք գործարկման համար: Համոզված եմ, որ Վրաստանում այսօր շատերն են հասկանում, որ ուղղակի հրամայական անհրաժեշտություն կա Ռուսաստան-Հայաստան առանցքով գոնե մասամբ հավասարակշռելու Թուրքիա-Ադրբեջան վեկտորի մեծացող ազդեցությունը: Հենց այդ հասարակական և քաղաքական ուժերի հետ էլ մենք պետք է փնտրենք համագործակցության ու փոխգործակցության ուղիներ:

Հարևան Իրանի մասին: Իրանը ևս մեզ համար կյանքի ճանապարհ է, և նրա դերը մեր արտաքին տնտեսական կապերում մեծանալու միտում ունի: Իրանում մեծ հետաքրքրություն կա թե՛ Հայաստանի, թե՛ Վրաստանի նկատմամբ: Այս տարի օգոստոսի 5-ին վերացվեց անցագրային ռեժիմը: Տարվա ընթացքում ավելի քան 260 հազար իրանցիներ իբրև գրոսաշրջիկ այցելել են Հայաստան: Սպասվում է, որ եկող տարի նրանց թիվը կանցնի 300 հազարից: Իրանի վրայից վերջերս հանվեցին արևմտյան արգելամիջոցները: Սա նշանակում է, որ բացվում են համագործակցության նոր, շատ ավելի մեծ ծավալի հնարավորություններ: Արևմտյան փորձագետների գնահատմամբ ֆինանսական արգելամիջոցների վերացումից հետո իրանական շուկան միանգամից կարող է կլանել 120 միլիարդ դոլար: Տեղեկություններ կան, որ արդեն իսկ պայմանավորվածություններ են ձեռք բերվել մոտ 90 միլիարդ դոլար ծավալով: Սա աննախադեպ հնարավորություններ է բացել Ռուսաստան-Իրան համագործակցությունը առաջ մղելու համար: Հայաստանը ԵԱՀԿ՝ անդամ միակ երկիրն է, որը սահմանակից է Իրանին: Եվ միանգամայն տրամաբանական կլինի, որ հայերս Իրանի լոբբինգը անենք

Ռուսաստանում և Ռուսաստանի լոբբինգը Իրանում: Սա, անկասկած, շնորհակալ գործ է և լուրջ ներդրում Հյուսիս-Հարավ առանցքի զարգացման մեջ: Կարծում եմ՝ հարևան վրացիները ուշադրությամբ հետևելու են Ռուսաստան-Հայաստան-Իրան տնտեսական համագործակցության ընթացքին:

Եվ վերջինը: Չի կարելի նորմալ համարել, երբ միայն արտասահմանյան երրորդ ուժերն են դրամաշնորհ հատկացնում՝ Վրաստան-Հայաստան-Իրան խաղաղ հարևանության և համագործակցության հեռանկարը առաջ մղելու համար: Մենք բոլորս շատ լավ հասկանում ենք, որ ով վճարում է, նա էլ պատվիրում է: Երբ այդ ուժերին հարմար է համագործակցության գաղափարը, նրանք դրա համար վճարում են, իսկ երբ հարմար չլինի, չեն վճարի: Այսպիսով՝ այդ համագործակցությունը առաջ մղելու պայմանը դառնում է երրորդ ուժերի ցանկությունը: Բայց Հայաստան-Իրան-Վրաստան համագործակցությունը, բարիդրացիությունը, փոխօգնությունն ու փոխլրացումը զարգացնելը բխում է մեր անկախ պետությունների կենսական շահերից: Ուրեմն բնական կլինեք ակնկալել, որ Հայաստանի, Վրաստանի և Իրանի կառավարությունները պետական բյուջեներում կամ պետական ծախսերում միջոցներ հատկացնեն մեր երկրների գիտնականներին, արվեստագետներին, մտավորականներին, երիտասարդներին, ուսանողներին, մարզիկներին, հասարակական ու քաղաքական կառույցներին միմյանց հետ շփվելու և փոխշահավետ համագործակցության ծրագրեր առաջ մղելու համար: Սա պետք է պահանջել մեր կառավարություններից և հետևել, որ այս գործը գլուխ գա:

Ես անկեղծորեն ուրախ եմ այս գիտաժողովի անցկացման փաստի կապակցությամբ և ուզում եմ արտահայտել մեր հասարակական կազմակերպության պատրաստակամությունը Վրաստանի և Իրանի գործընկերների հետ լուրջ համագործակցություն սկսելու և այն զարգացնելու ուղղությամբ:

**Իրան-Հայաստան գազային համագործակցության հեռանկարների
ու գազի շուկայի որոշ առանձնահատկությունների մասին**

**About Iran-Armenia gas cooperation prospects and some features of
the gas market**

*Արմեն Մանվելյան,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. բ.
Armen Manvelyan,
The Institute of Oriental Studies NAS RA, PhD.*



Իրան-Հայաստան էներգետիկ համագործակցությունը թերևս երկար տարիների պատմություն ունի, և այն սկսվել է դեռ 1991 թվականին՝ Հայաստանի Հանրապետության անկախացումից անմիջապես հետո: Սակայն իրական ու խորքային համագործակցության սկիզբը կարելի է համարել հայ-իրանական գազի խողովակաշարի կառուցման շուրջ պայմանգրի կնքումը, որը իրականացվեց 2003 թվականին: Երկկողմ պայմանավորվածությունից մի քանի տարի անց 2007 թվականի մարտ ամսին շահագործման հանձնվեց, մոտ 2.3 մլրդ խ/մ թողունակության խողովակաշարը, որը կարող է ոչ միայն իրական այլընտրանք լինել ռուսական գազամուղին հնարավոր ճգնաժամերի դեպքում, այլև դառնալ դեպի հյուսիս գազի մղման համար կարևոր նախապայման¹:

¹ Երկկողմ հարաբերություններ, <http://www.mfa.am/hy/country-by-country/ir/>:

Իրան - Հայաստան գազի շուրջ պայմանավորվածությունները և դրանց զարգացման հեռանկարները պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի՝

1. Իրան-Հայաստան պայմանագրով և գործող գազամուղով դեպի ՀՀ գազի ներմուծման մեծացում,

2. Իրանից Հայաստանով դեպի Վրաստան գազի առաքում՝ պայմանավորված Վրաստանում գազի պահանջարկի աճով և այլընտրանքային հոսքերի ապահովմամբ,

3. Հայաստանով և Վրաստանի ծովային նավահանգիստներով իրանական գազի արտահանում դեպի Եվրոպա:

Նշված երեք ծրագրերն էլ իրականացման համար ունեն որոշակի հնարավորություններ և միաժամանակ ռիսկեր, որոնք հասկանալու համար նախ և առաջ պետք է խոսել համաշխարհային գազի շուկայի առանձնահատկությունների՝ այդ ապրանքի գնագոյացման մեխանիզմների ու նաև դրա տնտեսական, տեխնիկական և այլ բաղադրիչների մասին:

Գազի շուկայի առանձնահատկությունները

Համաշխարհային էներգետիկ շուկայում նավթը գնալով գիշում է դիրքերը այլ տիպի էներգակիրներին, առաջին հերթին՝ գազին, որը վերջին երկու տասնամյակում էականորեն մեծացրել է իր չափաբաժինը էներգետիկ միջազգային շուկայում: Եթե 2000 թվականին էներգետիկ շուկայում գազի չափաբաժինը 10% էր, ապա 2015 թվականին այն կազմում է արդեն մոտ 24%²: Սակայն չնայած դրան՝ գազը տարբերվում է հանածո այլ տիպի էներգակիրներից առաջին հերթին նրանով, որ վերջինս, ի տարբերություն նավթի և ածուխի, բորսային ապրանք չէ, և դրա գինը ձևավորվում է ոչ թե Լոնդոնի կամ, ասենք, Նյու-Յորքի հումքային բորսաներում, այլ միջպետական պայմանագրերով, ինչն էլ պատճառ է դառնում, որ գազի գինը, ըստ տարածաշրջանների, էականորեն տարբերվի: Հետևաբար կարող ենք ասել, որ գազի ընդհանուր շուկա, որպես այդպիսին, գոյություն չունի, իսկ միջպետական հարաբերություններում գազի գնի որոշման հարցում, բացի տնտեսական հաշվարկներից, կա նաև հստակ քաղաքական գործոնի չափաբա-

² Integration of Gas Markets in the Asian Pacific Region,
https://www.eriras.ru/files/Kulagin_Kuala_Lumpur.pdf:

ժին, ինչով էլ պայմանավորված՝ փոփոխվում է գազի գինը տարածաշրջանից տարածաշրջան և պետությունից պետություն:

Այսպես՝ ԱՄՆ-ում գազի մեծածախ գինը մոտ 120-130 դոլար է 1000 խ/մ դիմաց, իսկ Եվրամիության գազի շուկայում մեծածախ միջին գինը տատանվում է 200-300 դոլարի միջև: Այստեղ պետք է նշել, որ, օրինակ, ռուսական գազի գինը Լեհաստանի համար մոտ 30% ավելի թանկ է, քան նրա հարևան Գերմանիայի համար, այսինքն՝ քաղաքական գործոնը այս հարցում բավականին մեծ է, և պարզ է՝ մատակարար պետությունները որոշակիորեն գերիշխում են այս շուկայում: Գազը էլ ավելի թանկ է Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, օրինակ՝ Շապոնիան գազը գնում է մոտ 300-400 դոլարի սահմաններում, այն դեպքում, երբ Հարավային Կորեայի համար գազը արժե մոտավորապես 200-300 դոլարի ու այսպես շարունակ³: Բացի դրանից՝ գազի վաճառքի կազմակերպման համար հարկավոր է կառուցել խողովակաշարեր, այդ ապրանքը հասցնել սպառման շուկա, իսկ եկամուտներ ակնկալել միայն կատարված ծախսերի ու ներդրումների վերադարձից հետո:

Գազի վաճառքի ձևերից մեկն էլ հեղուկացումն է և դրա համար նախատեսված հատուկ գազատար նավերով դրա հասցումը սպառողներին: Դրա համար պետք է կառուցել գազի հեղուկացման և հետհեղուկացման տերմինալներ՝ արտահանող և ընդունող նավահանգիստներում: Սա մույնպես բավականին ֆինանսատար և թանկ եղանակ է, որը, սակայն, գործող ձևերից մեկն է գազը Պարսից ծոցից դեպի համաշխարհային շուկա հասցնելու համար: Այսինքն, ի տարբերություն նավթի, գազի առք ու վաճառքի կազմակերպումը բավականին ժամանակատար ու ֆինանսատար է, իսկ եկամուտները, ի տարբերությունը նավթի, մույնիսկ վերջինիս ներկա գների պայմաններում, բավականին չնչին են:

Այսպիսով՝ գազի արդյունահանումը և արտահանումը նախապատրաստական մի շարք պայմաններ են պահանջում, դրանով էլ պայմանավորված՝ այդ ապրանքի վաճառքը ունի իր առանձնահատկությունները, ինչն էլ պետք է հաշվի առնել՝ վերլուծելու համար Իրանից Հայաստանով գազի արտահանման հնարավորությունների մասին: Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Իրանը, գազի ապացուցված պաշարներ-

³ Տե՛ս մույն տեղում:

րով լինելով աշխարհում թիվ մեկ պետությունը, միաժամանակ դրա արդյունահանման ծավալներով էականորեն զիջում է ԱՄՆ-ին, որը այս ցուցակում (ապացուցված նավթի պաշարների) միայն 6-րդ է, և Ռուսաստանին, որը 2-րդ է: ԱՄՆ-ը արդյունահանում է տարեկան մոտ 770 մլրդ խ/մ տարեկան գազ, Ռուսաստանը՝ 540 մլրդ խ/մ, իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ ընդամենը 198 մլրդ խ/մ⁴:

Սակայն նշված պետությունները բախվում են նաև մեկ այլ խնդրի. դա գազի սպառման ծավալներն են, ու այս առումով պետք է նկատել, որ, օրինակ, Իրանը սպառում է իր իսկ արտադրության գազի 98%-ը: Հետևաբար վերջինս որպեսզի դառնա գազի մեծ ծավալներ արտահանող պետություն, պետք է էականորեն ավելացնի գազի արդյունահանման ծավալները: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Իրանի գազի արդյունահանման ազգային ընկերությունը իր առջև խնդիր է դրել կրկնապատկել գազի արդյունահանումը մինչև 2020 թվականը՝ այն հասցնելով տարեկան մոտ 400 մլրդ խ/մ: Չնայած պետք է նշել, որ նման ծրագրի իրականացման համար հարկ կլինի ոչ միայն ֆինանսական այլև նորագույն տեխնոլոգիաների ներմուծում:

Թերևս կարելի է նշել, որ գազի արտահանման համար Թեհրանը որոշակի ծավալներ՝ մոտ 14 մլրդ խ/մ չափով, վերցնում է Թուրքմենստանից, և նախատեսվում է կառուցել 3-րդ խողովակաշարը, ինչը հնարավորություն կտա գազի ներմուծումը դեպի Իրան 2020 թվականին հասցնել մոտ 20 մլրդ խ/մ-ի:

Իրանից գազի արդահանման հնարավորությունների մասին

Իրան-Հայաստան գազի համագործակցությունը մեծ հեռանկարներ ունի՝ պայմանավորված 3-րդ բարձրավոլտ էլեկտրական գծի կառուցման հետ, սա հնարավորություն կտա ոչ միայն ավելացնելու դեպի Իրան էլեկտրաէներգիայի արտահանումը, այլև քառապատկելու, մինչև 1.2 մլրդ խ/մ չափով դեպի Հայաստան գազի ներկրումը: Սա ոչ միայն կհավասարակշռի ու

⁴ BP Statistical Review of World Energy, June 2016,
<https://www.bp.com/content/dam/bp/pdf/energy-economics/statistical-review-2016/bp-statistical-review-of-world-energy-2016-full-report.pdf>.

կմեծացնի գազի շուկան Հայաստանում, այլև կնպաստի գազի ու էլեկտրաէներգիայի մեծածախ գների նվազմանը մեր ներքին շուկայում:

Գործարքի հաջող իրականացման դեպքում Հայաստանը հնարավորություն կունենա մեծացնելու նաև էլեկտրաէներգիայի արտահանումը դեպի Վրաստան՝ մրցակցության մեջ մտնելով նաև Ադրբեյջանի հետ, որն այս պահին ավելի էժան գնով է էլեկտրաէներգիա առաքում դեպի Վրաստան:

Վերջին տարիներին Վրաստանում տեղի է ունենում գազաֆիկացման գործընթաց, ինչը ավելացնում է գազի պահանջարկը այդ պետությունում, բացի դրանից՝ պաշտոնական Թբիլիսիի նախատեսել նոր ջերմակայանների կառուցում, ինչի շահագործումը ու ընդհանրապես համապատասխան ներդրումների գրավումը հնարավոր են միայն կայուն ու էժան գազի առկայության պայմաններում: Այս ծրագրերի իրականացման դեպքում Վրաստանը տեսանելի ապագայում կարիք կունենա մոտ 700 մլն խ/մ լրացուցիչ գազի, հետևաբար միայն Հայաստանը կարող է դառնալ այն երկիրը, որի տարածքով իրանական գազը կիոսի դեպի Վրաստան՝ ապահովելով վերջինիս անհրաժեշտ ծավալներով վառելիք և նպաստելով, որ վերջինս նվազեցնի իր կախվածությունը ադրբեյջանական գազից:

Իրանական գազի արտահանում վրացական նավահանգիստներից դեպի Եվրոպա տեսականորեն հնարավոր է, սակայն բախվում է մի շարք խնդիրների: Առաջին հերթին դա Եվրամիության կողմից այդ ծրագրի նկատմամբ հետաքրքրության հստակ արտահայտումն է, որը պետք է նշենք՝ մինչ օրս չի իրականացվել: Բացի դրանից՝ եվրոպական գազի շուկան գերհագեցած է, և շատ կոշտ մրցակցություն է ընթանում դեպի այդ տարածք գազ արտահանող հիմնական պետությունների՝ Նորվեգիայի, Ռուսաստանի ու Ալժիրի միջև: Այս պայմաններում գազի գինը Եվրոպայում վերջին տարիներին նվազել է, և այն դառնում է ոչ այնքան գրավիչ՝ գազ առաքող այլ պետությունների համար: Բացի դրանից՝ գազի ֆիզիկական մեծ ծավալների առաքում Սև ծովով խնդրահարույց է՝ պայմանավորված վերջինիս իրավական կարգավիճակի և այլ հարցերի հետ: Մասնավորապես կառուցել խողովակաշար ծովի ընդերքով անհնար է, քանի որ նմանատիպ հարցը պետք է համաձայնեցվի ավիամերձ պետությունների՝ Ռուսաստանի ու Թուրքիայի հետ, ինչն անհնար է դարձնում մնալ ծրագրի իրականացումը: Վրաստանում կառուցվող Անակլիա նավահանգիստում նախա-

տեսվում է գազի հեղուկացման տերմինալի շինարարությունը, ինչը տեսականորեն հնարավորություն է տալիս հետագայում քննարկելու գազատար նավերով հեղուկացված վառելիքը դեպի Բուլղարիա կամ Ռումինիա արտահանելու հնարավորությունը: Սակայն սա արդեն ավելի հեռավոր ծրագիր է, որի իրականացումը կախված է Եվրապական գազի շուկայի ֆինանսական գրավչության հետ:

Անփոփում

Կարելի է եզրակացնել, որ գազի միջազգային շուկան զարգացման մեծ հեռանկար ունի, ինչը այն գրավիչ է դարձնում արտահանող պետությունների համար: Հետևաբար վերջիններս դեպի այդ շուկաներ դուրս գալու համար փնտրում են այլընտրանքային ուղիներ, որպեսզի նվազեցնեն կախվածությունը մեկ ուղուց: Այս պայմաններում Հայաստանը որոշակի գրավչություն է ձեռք բերում իրանական գազի արտահանումը կազմակերպելու առումով: Եթե այս հարցում Հայաստան և Վրաստանը համագործակցեն, ապա կկարողանան ապահովել գազի լրացուցիչ պաշարներով ոչ միայն սեփական շուկանները, այլև կղաժնան դեպի Եվրոպա իրանական գազի արտահանման մոդ, այլընտրանքային ուղիություն գործող այլ ուղիներին:

Իրան-Հայաստան-Վրաստան առանցքով համագործակցության արդի վիճակը և զարգացման հեռանկարները
Iran-Armenia-Georgia strategic axis. Prospects of cooperation

Ռոման Կարապետյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
և դիվանագիտության ամբիոնի դասախոս,
ս. գ. ք.

Roman Karapetyan, The lecturer of the Department
of International Relations and Diplomacy,
YSU, PhD.



Արդի միջազգային տնտեսա-քաղաքական գործընթացներում տարածաշրջանային ինտեգրացիոն բազմակողմ հարթակները ամենաարագ զարգացող ուղղություններից են: Մերձկասպյան-սևծովյան տարածաշրջանում երկար ժամանակ փորձ է արվում զարգացնել Իրան-Հայաստան-Վրաստան առանցքով համագործակցությունը: Սակայն տասնամյակներ շարունակ այս ձևաչափը օբյեկտիվ պատճառներով չի ունեցել զարգացման մեծ հեռանկարներ՝ պայմանավորված Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցներով և որպես դրանց հետևանք՝ Իրան-Վրաստան տնտեսական կապերի թուլացումով: Մեր օրերում, երբ Իրան-Արևմուտք քաղաքական երկխոսությունը կայանում է, առավել քան երբևէ, մեծ հնարավորություններ են ստեղծվել այս առանցքի զարգացման համար:

Մեր կարծիքով՝ եռակողմ առանցքի ձևավորմամբ շահագրգռված հիմնական երկրներից մեկը Իրանն է, որը կարող է դառնալ վերջինիս հիմնական շարժիչ ուժը: Իրանը, լինելով էներգետիկ ռեսուրսներով հարուստ պետություն, առաջին հերթին խնդիր ունի այլընտրանքներ փնտրել էներգա-

կիրների շուկաների բազմազանության առումով: Մյուս կողմից էլ, Իրանը խնդիր ունի բարելավել դեպի Եվրոպա և հակառակ ուղղությամբ հաղորդակցության ուղիները, իսկ այս առանցքը կարող է հիմնալի հնարավորություններ ստեղծել սևծովյան նավահանգիստներով այս ուղղությամբ դուրս գալու տեսանկյունից:

Գաղտնիք չէ, որ առանցքի երկու երկրների հետ հարաբերություններն էլ ունեն ռազմավարական նշանակություն Հայաստանի համար, ուստի պաշտոնական Երևանը շահագրգռված է այս հարթակի կայացմամբ: Վրաստանն էլ, արդեն իսկ ընդգրկված լինելով արևմուտք-արևելք էներգետիկ և տրանսպորտային տարանցիկ ծրագրերում, հնարավորություն ունի իրացնելու իր՝ դեպի Արևմուտք հիմնական տարանցիկ երկիր դառնալու նոր հնարավորությունները: Դժվար է պնդել, որ առաջարկվող ֆորմատով համագործակցությունն ունի շատ մոտ ապագայում զարգանալու մեծ հեռանկարներ, սակայն մյուս կողմից էլ կան որոշակի հիմքեր դրա դիմամիկ զարգացման համար: Ներկայումս գործում են Իրան-Հայաստան, Իրան-Վրաստան, Հայաստան-Վրաստան երկկողմ և Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ համագործակցության որոշակի ծրագրեր ու մեխանիզմներ:

Առաջարկվող համագործակցության առանցքի ձևավորման ու զարգացման համար նոր խթան կարող է հանդիսանալ Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների չեղարկման գործընթացը: Փաստորեն, եթե նախկինում Հայաստանի ու Վրաստանի ձեռքերը ինչ-որ թելերով կապված էին, ապա այժմ այդ մասով խոչընդոտները վերացված են: Ներկայումս լավ հնարավորություն է ստեղծվել զարգացնելու առկա համագործակցությունը՝ այն դնելով որակապես նոր հարթության վրա: Մեր կարծիքով՝ այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին իրագործել արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածությունները երկկողմ և եռակողմ մակարդակներում, զարգացնել քաղաքական հարաբերությունները և հիմքեր ստեղծել քաղաքական մակարդակում եռակողմ երկխոսության համար:

Georgia's role in the peace-building process in the South Caucasus

Վրաստանի դերը Հարավային Կովկասում խաղաղության կառուցման գործընթացում



Maia Manchkhashvili

PhD student of political science,

Tbilisi State University

Մայա Մանչխաշվիլի,

Թբիլիսիի պետական համալսարանի ասպիրանտ

Introduction: Georgia due to its favorable position theoretically has the opportunity to have pragmatism-based political course. But strategical allocation does not mean automatically that the country can afford such policy. Small countries like Georgia choose between bad and worse. Change of their political vector depends on political situation in the region. And the processes in the region entail from the world order being adjusted to the interests of political actors.

Considering opportunities of Georgia from this point of view, there is less basis for optimism but that shall not be comprehended as insuperable standing. Political management shall work according to the principle of maximal implementation. Although political management of Georgia leans upon not only geographically small country but economically weak and institutionally failed state and that reality shall not allow to make many advantageous maneuvers, but

it still has the choice of diplomatic maneuvering and shall do the most in that direction.

Reality of the world and therefore in Transcaucasia permanently puts Georgia into the standing when particular conjuncture shall be considered. But it is vital for the country to care permanently for expansion of cooperation with regional neighbors. Approaches of the country shall be reconsidered from this point of view, and not only for Georgia, all the neighboring states of the region shall analyze that more cooperation is required as only that way it will be possible to change political balance gradually, the one making the countries of Transcaucasia to make forced steps. If there is solid political will in approaches of the states in the region, the processes will come out of the closed circle and the countries of Transcaucasia will be positioned with dignity in regional balance.

Theoretical framework, in which we are trying to study foreign policy strategy of Georgia and its role in peace processes is *Neorealism Theory*.

According to this theory, interstate relations are defined by the structure of international system. But international policy is not mechanical sum of sovereign states and other participants involved into the system, but are defined with the peculiarities characteristic for the system and enable comparatively weak players based upon their own forces to change its place and role in international system.

According to our reality the regional balance with exists in Transcaucasia is controlled by the Russian Federation. Any attempt to enter into area of its interests is opposed with strict actions of Russia. Thus, small countries like Georgia often are forced to act in limited political area and not to disturb the set order.

Though, it might be said that Georgia from that point of view tried to make bold political steps towards Europe and NATO and notwithstanding the fact that the country has been punished for that several times, Georgia is trying to follow its own way. That is the case when Georgia approaches correctly realization of its strategical interests and tries to settle with dignity on the world political map.

That is – Georgia shall not wait what political steps it will be forced to make due to international order, but by developing of new approaches and in

some sense, trying to introduce more dissonance into the regional order, shall try to restore its territorial integrity and have opportunity to choose freely.

Research issues: There are lots of issues and some of them are hard to reply. One of the actual issues are related to consider change in approaches of Russia towards the countries in the region in the nearest future. Whether it makes sense to wait for Russia to get involved into negotiations as equal partner. On one hand, those are justified issues, but on the other hand, they seem silly as it is inutile to wait for any change. And at the same time, positive resolution of those issues is the critical point which might change fundamentally the situation in the region, and that would be advantageous for Russia in particular. Russian political elite shall realize that it is possible to settle as the leading state without super power methods, but relations based upon cooperation and mutual benefits might bring more good for all the parties. If such moment does not come for Russian policy as the critical point, factually there is no hope to wait for any change of the current situation. Therefore, often all those political decisions made by political elite of the countries in the region become completely comprehensive.

Idea of research stands with the fact that Russia as the most powerful player in the region applying for all the methods will try not only to lose but also to reinforce control over the former soviet republics and not to allow expansion of cooperation among the states in Transcaucasia. Taking that into account, Georgian diplomacy shall do its best in order to assure the Russian Federation that the policy of the country is not aimed against Russia and that expansion of cooperation in Transcaucasia creates better economic environment for all the countries in the region.

1. Benefits of geographic allocation: advantageous geographic allocation was crucial in defining role and place of Georgia on world new map in early 90s. That was not realization of strategic steps placed by Georgian state officials but geographic standing, good intersection of interests and that was realization of American interests and not only in Transcaucasia. What Georgia does in order to master all those opportunities provided by the geographic allocation? In the first place all those benefits shall be defined, and that means not only implementation of transit function. One of the many is along with consideration of strategic allies, to reinforce relations with other political actors. Relations with Iran

especially shall be taken into account all the more Iran has been exempted from sanctions. Before sanctions Georgian policy towards Iran was more inconsecutive. For example, interruption of bank transactions related to the happenings of recent years, termination of visa-free travel might be considered. But taking into account earlier period, it seems Georgia failed to consider the greatest potential in that direction. Notwithstanding political conjuncture, it was possible to expand cooperation e.g. in the field of economy. Considering low indications of trading and economic turnover of Georgia and Iran, only cultural relations of two countries might be implemented at high level, which is only possible thanks to Georgian scientists. We believe it will be advantageous to expand strategic cooperation with Iran, which might bring interesting crucial moments to the regional political balance, and that should be one of the main tasks for foreign economic priorities of Georgia.

2. Tbilisi – political tribune: The government shall facilitate to turning Tbilisi to niche for high level meetings and negotiations. Although, diplomatic relations are ceased among several states (Georgia and Russia, Azerbaijan and Armenia, Armenia and Turkey), but political dialogue is being held among them and the place of such meetings is Tbilisi. Georgia shall reinforce that function and develop itself as political center, where in the first place delegation of neighboring countries will be able to hold negotiations.

Conclusions: Nevertheless Georgia is weak state, which often cannot act according to its interests and has to consider political conjuncture in the region, we still believe that since 90s Georgia has lost several opportunities to become economically as well as politically powerful state. The country failed to use completely its potential. We consider necessity to develop new approaches as well as to define foreign political goals better, which would facilitate its route on Euro-Atlantic choice.

Recommendations: Due to its long-term goals, Georgian government shall continue its dialogue with all the parties, among them with Russia also, as it is necessary to restore diplomatic relations, to start multilateral relations from the very beginning. Besides, the government shall manage to use the role of Georgia as of the mediator country in the dialogue among the countries in the region and to start strategic dialogue with one of the leading states of the region - Iran.

Gravity of political standing in Transcaucasia imposes huge responsibility over those politicians and analysts establishing such policy. Conflict of interests does not disturb the truth and natural justice. Principles of peaceful cohabitation and human rights might not be neglected completely. In such case even existence would lose its sense.

**Հայաստանի Հանրապետության և Վրաստանի քաղաքական
համակարգերի համեմատական վերլուծություն**

**Comparative analysis of political systems in
Armenia and Georgia**



*Յոլակ Ակոպյան,
Վ. Բրյուսովի անվ. լեզվաքանական
համալսարանի պրոռեկտոր, ք. գ. ք.
Tsolak Akopyan,
YSLU, Vice-rector on Students,
Youth and Public Relations PhD*

ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան երկու հանրապետությունները՝ Հայաստանի Հանրապետությունը և Վրաստանը, կանգնեցին պետականաշինության խնդրի առջև: Վերոնշյալ երկու պետությունները, գտնվելով միևնույն տարածաշրջանում և ունենալով արտաքին քաղաքական խնդիրներ, պետք է ունենային այնպիսի քաղաքական համակարգ, որն իրենց գերծ կպահեր քաղաքական ճգնաժամերից: Քաղաքական համակարգերի զարգացման համեմատական վերլուծությունը թույլ է տալիս կողմերից մեկի ունեցած հաջողությունը տեղայնացնել մյուս երկրում, ինչպես նաև խուսափել թույլ տված սխալներից: Անցումային փուլում գտնվող երկու երկրներում էլ քաղաքական համակարգերի տեղի և դերի գնահատումը կարևորվում է նաև ժողովրդավարական բարեփոխումների առումով: Վերջին ժա-

մանակներս գիտական և հատկապես հասարակական-քաղաքական շրջանակներում հաճախ է խոսվում Վրաստանում իրականացված բարեփոխումների մասին: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ փորձ ենք կատարել ուսումնասիրել դրա համապատասխանությունն իրականությանը, ինչպես նաև պարզել դրա տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում: ՀՀ և Վրաստանի քաղաքական համակարգերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նաև հասկանալ, թե արդյոք գոյություն ունեն տարբերություններ էթնիկական առումով միատարր ու բազմատարր երկու հանրապետությունների միջև:

ՀՀ և Վրաստանի քաղաքական համակարգերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր եղավ առաձնացնել դրանց զարգացման փուլերը: Արդյունքում երկու երկրների քաղաքական համակարգերի զարգացումը կարելի է բաժանել 5 փուլերի: ՀՀ քաղաքական համակարգի զարգացման փուլերը ընդգրկում են հետևյալ ժամանակահատվածները՝ 1990-1991 թթ., 1991-1995 թթ., 1995-2005 թթ., 2005-2015 թթ., 2015 թ.-ից սկսած, իսկ Վրաստանինը՝ 1990-1991 թթ., 1991-1995 թթ., 1995-2004 թթ., 2004-2010 թթ., 2010 թ.-ից սկսած: Առաջին փուլերում երկու հանրապետություններում էլ բացակայում էր նախագահի ինստիտուտը, որի արդյունքում էլ կառավարությունների ձևավորման գործում հսկայական էր խորհրդարանների դերը: Երկրորդ փուլերը աչքի են ընկնում կառավարությունների ձևավորման գործում արդեն նախագահների հսկայական ազդեցությամբ, որն ուներ իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Հետագա փուլերում խորհրդարանները աստիճանաբար մեծացրին իրենց ազդեցությունը հասարակության քաղաքական համակարգում: Իրականացված սահմանադրական բարեփոխումներից հետո նախ Վրաստանը, ապա ՀՀ-ն անցում կատարեցին կառավարման խորհրդարանական մոդելին: Վրաստանում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումներից հետո էլ սակայն Վրաստանում շարունակվեցին պահպանվել կիսանախագահականության տարրեր: Ավաժնի վառ ապացույցը ժողովրդի կողմից ուղղակի ընտրվող նախագահի ինստիտուտի առկայությունն է: Խորհրդարանական կառավարման պարագայում այս մոդելի կիրառումը իր մեջ բավականին մեծ ռիսկեր է պարունակում այն դեպքում, երբ ժողովրդի կողմից ուղղակի մանդատ ստացող երկու մարմինները՝ նախագահը և խորհրդարանը, տարբեր քաղաքական ուժեր են ներկայաց-

նում: 2012 թվականին տեղի ունեցած խորհրդարական ընտրությունների արդյունքում Վրաստանը արդեն կանգնել է նմանատիպ խնդրի առջև: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Վրաստանում, ի տարբերություն հետխորհրդային շատ երկրների, արդեն առկա է ընտրությունների արդյունքով առանց հեղափոխության իշխանության փոփոխման նախադեպը, խնդիրը էլ ավելի է կարևորվում: Պատահական չէ, որ այսօր Վրաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում քննարկվում է Սահմանադրության այդ դրույթը փոփոխելու հարցը: Կառավարման խորհրդարանական համակարգին ՀՀ-ն ամբողջությամբ անցում կկատարի միայն 2018 թվականին, որից հետո միայն կարելի է խոսել քաղաքական համակարգի վրա դրա ամբողջական ազդեցության մասին:

Ժողովրդավարական քաղաքական համակարգերում բավականին մեծ են քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը: ՀՀ-ում և Վրաստանում քաղաքացիական հասարակությունը գնալով մեծացնում է իր ազդեցությունը քաղաքական որոշումների ընդունման վրա: Երկու երկրների իշխանությունների տարբեր մարմիններում գործում են բազմաթիվ խորհուրդներ և հանձնաժողովներ, որտեղ ակտիվորեն ներգրավված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: ՀՀ-ում առավել նկատելի է հասարակական կազմակերպությունների ազդեցությունը որոշումների ընդունման ժամանակ, իսկ Վրաստանում համեմատաբար ավելի մեծ է եկեղեցու դերը: Չնայած վերոնշյալին՝ հարկ ենք համարում նաև ավելացնել, որ շատ դեպքերում քաղաքացիական հասարակության ազդեցությունը դեկորատիվ բնույթ է կրում և իրականացվում է ավելի ժողովրդավարական երևալու նպատակով:

**“Armenia and neighbors. Looking for peace” initiative
Civil society organizations in peace building**

**Քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները
խաղաղաշինության ոլորտում**

*Tsovinar Ghazaryan
Armenia Round Table Foundation,
Russian-Armenian (Slavic) University,
PhD student,
Ծովինար Ղազարյան,
ԵՀԽ հայաստանյան «Կլոր սեղան»
հիմնադրամ,
Ռուս-հայկական (սլավոնական)
համալսարանի ասպիրանտ*



Neighborly relations with all of its neighbors as a means for stability in the region and precondition for sustainable development is of priority to Armenia. Under dissimilar economic, political and social circumstances and different religions, Armenia, Georgia and Azerbaijan, and the regional powers, Russia, Iran and Turkey, are connected by regional interdependence and inevitable neighborhood. Therefore, a multi-dimensional approach to foreign policy and using “people’s diplomacy” as one of the means for establishing, normalizing and maintaining peaceful and undisturbed relations with the neighbor is of importance to national security and stability in the region.

Dispute over recognition of the Armenian Genocide 1915 and the military conflict of 1991 over Nagorno-Karabakh have created tense relations with two of immediate neighbors of Armenia - Turkey and Azerbaijan. The Turkish-

Armenian rapprochement, which officially concluded in 2009 with the *Protocols on the establishment of diplomatic relations and development of bilateral relations*, was suspended and the official relations between both countries remain at a minimum level. Normalization of Armenian-Turkish relations is linked to Karabakh issue, opposing Armenia and Azerbaijan. The conflict over Nagorno Karabakh is considered the longest in OSCE area and of fundamental security threat to the South Caucasus, with adverse impact on economic development and regional relation building.

While “track I” developments remain slow and official interactions are discouraging, “track II” diplomacy is trying to build up bottom-up pressure for peace and conflict transformation. Civil society initiatives are among the most important cross-border activities maintaining dialogue and exchange.

Civil society is considered, not yet fully recognized by “track I” diplomacy, a strong force in advancing the peace process. For the role of civil society to be fulfilled, a strong political will and consistent commitment on the part of the decision makers to involve civil society in peace building and search of mutually acceptable solutions should be displayed, independence and safety of CSOs ensured.

